ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49>>

ք.Երևան

«23» մարտի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յան Բիլդինգ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության Զ. Մելիքսեթյանին որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ օգոստոսի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **9838800 (ինն միլիոն ութ հարյուր երեսունութ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, **որից 1639800 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունինը հազար ութ հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,

գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..16 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Յան Բիլդինգ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Քանաքեռ, Շրջ. Թունել 2ն. S.3
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900022701438	Հ/Հ 1930062788010100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00168853
Գ. Չթրյան----------	Զ. Մելիքսետյան ----------
¥ստորագրություն"	(ստորագրություն)
Կ.Տ	Կ. Տ

Հավելված թիվ 1
<< 23> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49>>** *գնման պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11 փ. 12 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը Հազ. դրամ
1	2	3	4	5		
		Քանդման աշխատանքներ				
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /1800մ^2/	տն	2.7000	0.9040	2.4408
2	C310-2	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	2.7000	0.6990	1.8873
3	E27-36	Եզրաքարերի քանդում /հիմքով/	գմ	235.0000	0.6740	158.3900
4	E46-79կիր.	Պատի քանդում $H_{միջ.}$=1մ	մ^3	6.5000	9.1760	59.6440
5	E17-91 K=0.6	Ցայտաղբյուրի ապամոնտաժում	կ-տ	1.0000	1.2990	1.2990
6	E33-621 K=0.7	Լուսավորության սյուների ապամոնտաժում հետագա վերատեղադրմամբ	հատ	2.0000	7.4790	14.9580
7	C310-1 տ.մ.կ 29	Առկա մարգասարքերի ապամոնտաժում հետագա վերատեղադրմամբ	հատ	1.0000	4.7560	4.7560
8	E46-109	Բետոնե հարթակների քանդում $h_{միջ}$=10սմ	մ^2	110.0000	0.3320	36.5200
9	E27-33	Ա/բ ծածկույթի քանդում, $h_{միջ}$=4սմ, 170քմ	մ^3	6.8000	2.9260	19.8968
10	E27-33	Ա/բ ծածկույթի քանդում, հմիջ=3սմ, b=30սմ, բետոնե եզրաքարերի տեղադրման համար, 53քմ	մ^3	1.5900	2.9260	4.6523
11	C310-2 տ.մ.կ 29	Առկա նստարանների և սեղանի ապամոնտաժում	հատ	4.0000	1.6340	6.5360
12	E1-962	IV կարգի գրունտի մշակում ձեռքով, $h_{միջ}$=30սմ	մ^3	39.5000	2.9120	115.0240
13	E1-970	Նույնի օգտագործում տեղում	մ^3	39.5000	1.0180	40.2110
14	C310-2 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների	տ	28.7500	1.3120	37.7200

		վրա եւ տեղափոխում մինչև 13կմ				
		Կառուցողական աշխատանքներ				
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ, 20-40 ֆրակցիա	$մ^3$	4.4000	6.1650	27.1260
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	352.0000	4.2650	1501.2800
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 80x200 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ, 20-40 ֆրակցիա	$մ^3$	2.0800	6.1650	12.8232
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	278.0000	3.0210	839.8380
		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	$մ^3$	36.3000	6.1650	223.7895
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր g/a շաղախով	$մ^3$	0.6800	11.8480	8.0566
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	$մ^2$	16.0000	3.7840	60.5440
		Նոր գրուցատաղավարի տեղադրում, 1 հատ				
1	E9-209	Զրուցատաղավարի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.2100	111.4300	23.4003
2	շուկա	Քառակուսի կտրվածքի խողովակ □50x50x3մմ, 8.0գմ	կգ	34.5000	0.2090	7.2105
3	շուկա	Քառակուսի կտրվածքի խողովակ □40x40x3մմ, 39.4գմ	կգ	132.5000	0.2160	28.6200
4	շուկա	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □40x20x2մմ, 27.3գմ	կգ	42.5000	0.2820	11.9850
5	E10-197	100x30 հղկված փայտ	$մ^2$	2.5000	4.3520	10.8800
6	E15-626	Նույնի լաքապատում	$մ^2$	6.5000	0.2300	1.4950
7	շուկա	Մետաղական թիթեղ —100x14050x6մմ	կգ	3.3000	0.3130	1.0329
8	E6-1	Բետոն B12.5 դասի /կանգնակների բետոնացում/	$մ^3$	0.4500	25.6690	11.5511
9	E33-82	Մետաղական մասերի յուղաներկում	տ	0.2100	8.6640	1.8194
10	E12-274	Տանիքի ծածկույթի պատրաստում մետաղական կղմինդրից	$մ^2$	7.0000	4.8780	34.1460
		Բետոնե հարթակների պատրաստում նոր նստարանների տեղադրման համար				
1	E6-90 կիր.	Նոր նստարանների /7հատ/ տեղադրման համար բետոնե հարթակի իրականացում /h=30սմ/ B12.5	$մ^3$	3.5000	31.9850	111.9475
2	E27-22-1	Բետոնե հարթակի տակ խճի իրականացում /h=10սմ/	$մ^3$	1.4000	6.1560	8.6184
3	E8-27	Բետոնե հարթակի տակ երկշերտ քսուկային ջրամեկուսացում	$մ^2$	3.5000	0.6030	2.1105
4	շուկա	Մետաղական թերթ 150x150x6	կգ	25.5000	0.3130	7.9815
5	շուկա	Ամրան Φ10A500c	տ	0.0038	266.0370	1.0109
6	շուկա	Ամրան Φ8A500c	տ	0.1050	274.0000	28.7700

		Այլ աշխատանքներ				
1	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ³	4.3000	1.9850	8.5355
2	E17-91	Ցայտաղբյուրի ձեռք բերում և տեղադրում	կ-տ	1.0000	71.6610	71.6610
3	E16-33	Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներից ∅50մմ, /ցայտաղբյուրի համար/	գմ	15.4000	0.8350	12.8590
4	E16-261	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ∅e20, /ցայտաղբյուրի համար/	գմ	27.4000	1.9160	52.4984
5	E15-262	Պատերի սվաղում ց/ա հարթաշերտով, 30մմ հաստ. /մասնակի/	մ²	9.5000	1.2930	12.2835
6	E15-521 K=2	Պատերի նկարազարդում	մ²	195.0000	0.7030	137.0850
7	E1-1746	Տարածքի համահարթեցում մեխանիզմով	մ²	650.0000	0.0370	24.0500
8	E1-1612	Գրունտի բերում կողլիցքից, փռում, հարթեցում և տոփանում տարածքում	մ³	33.4500	1.0180	34.0521
		Նախահաշիվ N1-2 էլեկտրատեխնիկական մաս				
1	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ³	4.8000	2.9730	14.2704
2	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	71.4000	0.1870	13.3518
3	շուկա	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 2.4+2.4մ³ /	մ³	4.8000	1.5150	7.2720
4	8-417-7	Խողովակ վինիպլաստե ∅50մմ	գմ	71.4000	0.4210	30.0594
5	E8-146-1	ԱԲԲԳ 4x16մմ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	7.8400	1.0170	7.9733
6	E8-145-1	ՊԲՀ 2x4մմ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	71.4000	0.3880	27.7032
7	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	71.4000	0.1910	13.6374
8	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ³	2.4000	0.8610	2.0664
9	C310-2 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 2կմ	տ	4.3200	1.3120	5.6678
10	Գնահաշվարկ N1	Դեկորատիվ հենարաններով լուսատուների տեղադրում H=3.5մ	հատ	5.0000	67.6240	338.1200
11	E33-621	Նախկինում ապամոնտաժված հենասյան մոնտաժում	հատ	1.0000	10.6839	10.6839
12	E6-1	Միաձույլ բետոնե հիմքի պատրաստում B20 դասի բետոնից	մ³	0.3600	28.9120	10.4083
13	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ էկոնոմ լամպով 85վտ, կամ համարժեք	հատ	2.0000	10.3950	20.7900
		Ընդամենը /հազ. դր./				4325.0001
		ԱԱՀ 20 %				865.0000
		Ընդամենը /հազ. դր./				5190.000

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11 փ. 16 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը Հազ. դրամ
1	2	3	4	5		
		Քանդման աշխատանքներ				
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /1850մ^2/	տն	2.80	0.908	2.5424
2	C310-2 տ.մ.կ 29	Աղբի տեղափոխում մինչև 2կմ	տն	2.80	0.701	1.9628
3	E27-36	Եզրաքարերի քանդում /հիմքով/	գմ	115.0	0.677	77.855
4	C310-1 տ.մ.կ 29	Առկա զրուցարանի ապամոնտաժում	հատ	1	4.774	4.774
5	P9-26կիր.	Մետաղական ճաղաշարերի ապամոնտաժում	գմ	46.00	0.361	16.606
6	E17-91 K=0.6	Ցայտաղբյուրի ապամոնտաժում	կ-տ	1	1.304	1.304
7	C310-1 տ.մ.կ 29	Առկա մարզասարքերի ապամոնտաժում	հատ	2	4.774	9.548
8	C310-1 տ.մ.կ 29	Առկա մարզասարքերի ապամոնտաժում հետագա վերատեղադրմամբ	հատ	1	4.774	4.774
9	E46-109	Բետոնե հարթակների քանդում $h_{միջ}$=10սմ	մ^2	280.00	0.333	93.24
10	E27-33	Ա/բ ծածկույթի քանդում, $h_{միջ}$=4սմ, 30քմ	մ^3	1.20	2.937	3.5244
11	E27-33	Ա/բ ծածկույթի քանդում, հմիջ=3սմ, b=30սմ, բետոնե եզրաքարերի տեղադրման համար, 37.3քմ	մ^3	1.12	2.937	3.286503
12	C310-2 տ.մ.կ 29	Առկա նստարանների և սեղանի ապամոնտաժում	հատ	4	1.172	4.688
13	E1-962	IV կարգի գրունտի մշակում ձեռքով, $h_{միջ}$=30սմ	մ^3	64.0	2.923	187.072
14	E1-970	Նույնի օգտագործում տեղում	մ^3	64.0	1.022	65.408
15	C310-2տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 2կմ	տ	26.2	1.317	34.43955

		Կառուցողական աշխատանքներ				
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 150x300 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ, 20-40 ֆրակցիա	մ^3	3.13	6.189	19.37157
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	240.0	4.281	1027.44
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 80x200 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ, 20-40 ֆրակցիա	մ^3	1.70	6.189	10.5213
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	180.0	3.033	545.94
		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ^3	23.75	6.189	146.98875
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր g/a շաղախով	մ^3	0.48	11.894	5.70912
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	մ^2	11.4	3.799	43.3086
		Նոր զրուցատաղավարի տեղադրում, 1 հատ				
1	E9-209	Զրուցատաղավարի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.21	111.859	23.49039
2	շուկա	Քառակուսի կտրվածքի խողովակ □50x50x3մմ, 8.0գմ	կգ	34.5	0.201	6.9345
3	շուկա	Քառակուսի կտրվածքի խողովակ □40x40x3մմ, 39.4գմ	կգ	132.5	0.217	28.7525
4	շուկա	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □40x20x2մմ, 27.3գմ	կգ	42.5	0.283	12.0275
5	E10-197	100x30 հղկված փայտ	մ^2	2.50	4.368	10.92
6	E15-626	Նույնի լաքապատում	մ^2	6.50	0.231	1.5015
7	շուկա	Մետաղական թիթեղ —100x14050x6մմ	կգ	3.3	0.314	1.0362
8	E6-1	Բետոն B12.5 դասի /կանգնակների բետոնացում/	մ^3	0.45	25.768	11.5956
9	E33-82	Մետաղական մասերի յուղաներկում	տ	0.21	8.697	1.82637
10	E12-274	Տանիքի ծածկույթի պատրաստում մետաղական կղմինդրից	մ^2	7.0	4.897	34.279
		Բետոնե հարթակների պատրաստում նոր նստարանների տեղադրման համար				
1	E6-90 կիր.	Նոր նստարանների /7հատ/ տեղադրման համար բետոնե հարթակի իրականացում /h=30սմ/ B12.5	մ^3	3.5	32.108	112.378

2	E27-22-1	Բետոնե հարթակի տակ խճի իրականացում /h=10սմ/	մ^3	1.4	6.18	8.652
3	E8-27	Բետոնե հարթակի տակ երկշերտ քսուկային ջրամեկուսացում	մ^2	3.500	0.605	2.1175
4	շուկա	Մետաղական թերթ 150x150x6	կգ	25.5	0.314	8.007
5	շուկա	Ամրան Φ10A500c	տ	0.0038	267.059	1.0148242
6	շուկա	Ամրան Φ8A500c	տ	0.105	275.053	28.880565
		Բետոնե աստիճանների կառուցում				
1	E1-962	IV կարգի գրունտի մշակում ձեռքով, կողլիցքով	մ^3	2.1	2.985	6.2685
2	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում	մ^3	0.54	6.178	3.33612
3	E6-13	Աստիճանների կառուցում B12.5 դասի բետոնից	մ^3	1.8	26.842	46.9735
		Այլ աշխատանքներ				
1	Գնահաշվարկ N3	Մետաղական բազրիքի իրականացում	գմ	80.0	6.045	483.6
2	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ^3	14.50	1.993	28.8985
3	E17-91	Ցայտաղբյուրի ձեռք բերում և տեղադրում	կ-տ	1	71.936	71.936
4	E16-33	Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներից Ø50մմ, /ցայտաղբյուրի համար/	գմ	22.0	0.838	18.436
5	E16-261	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Øe20, /ցայտաղբյուրի համար/	գմ	35.0	1.923	67.305
6	E15-521K=2	Պատերի նկարազարդում	մ^2	75.00	0.706	52.95
7	E1-1746	Տարածքի համահարթեցում մեխանիզմով	մ^2	415.00	0.037	15.355
8	E1-1612	Գրունտի բերում կողլիցքից, փռում, հարթեցում և տոփանում տարածքում	մ^3	30.00	1.022	30.66
Նախահաշիվ N1-2 էլեկտրատեխնիկական մաս						
1	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ^3	4.20	2.985	12.537
2	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	60.0	0.187	11.22
3	շուկա	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 2.1+2.1մ^3 /	մ^3	4.20	1.521	6.3882
4	8-417-7	Խողովակ վինիպլաստե Ø50մմ	գմ	60.0	0.423	25.38

5	Е8-146-1	АВВГ 4х16մմ^2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	7.2	1.021	7.3512
6	Е8-145-1	ПВС 2х4մմ^2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	60.0	0.39	23.4
7	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	60.00	0.192	11.52
8	Е1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ^3	2.10	0.866	1.8186
9	С310-2 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 2կմ	տ	4	1.455	5.529
10	Գնահաշվարկ N1	Դեկորատիվ հենարաններով լուսատուների տեղադրում H=3.5մ	հատ	5	67.884	339.42
		Ընդամենը /հազ. դր./				3874.000
		ԱԱՀ 20%				774.8000
		Ընդամենը /հազ. դր./				4648.800

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022701438
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ. Տ

Կապալառու
«Յան Բիլդինգ» ՍՊԸ
Ք. Երևան, Քանաքեռ, Շրջ. Թունել 2ն. Տ.3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930062788010100
ՀՎՀՀ 00168853

Հ. Մելիքսեթյան----------
(ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 2
<< 23> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղհրապարակների հիմնանորոգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11 փ. 12 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 31.08.2018թ
2	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11 փ. 16 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 31.08.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022701438
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ. S

Կապալառու
«Յան Բիլդինգ» ՍՊԸ
Ք. Երևան, Քանաքեռ, Շրջ. Թունել 2ն. S.3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930062788010100
ՀՎՀՀ 00168853

Զ. Մելիքսեթյան ----------
(ստորագրություն)
Կ. S

Հավելված թիվ 3
<< 23> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49>>** *գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45600000	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11 փ. 12 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ	----	---	1 038 000	2 335 500	2 335 500	2 335 500	4 152 000	4 152 000	4 152 000	5 190 000	5 190 000	5 190 000	5 190 000
		Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Նուբարաշեն 11 փ. 16 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ	---	----	9 29 760	2 091 960	2 091 960	2 091 960	3 719 040	3 719 040	3 719 040	4 648 800	4 648 800	4 648 800	4 648 800

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022701438
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Յան Բիլդինգ» ՍՊԸ
Ք. Երևան, Քանաքեռ, Շրջ. Թունել 2ն. Տ.3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930062788010100
ՀՎՀՀ 00168853

Զ. Մելիքսեթյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 23> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 23> մարտի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49>>** *գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«23» մարտի 2018 թ.**

«Յան Բիլդինգ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Զորայր Մելիքսեթյանի նույնն. Քարտ 000048744 տրված 20.11.2012թ 012-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **Երևանի քաղաքապետարան** * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ _*«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու
«Յան Բիլդինգ» ՍՊԸ
Ք. Երևան, Քանաքեռ, Շրջ. Թունել 2ն. S.3
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930062788010100
ՀՎՀՀ 00168853

Զ. Մելիքսեթյան ----------
(ստորագրություն)

Կ. S

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Յան Բիլդինգ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1930062788010100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00168853

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ **983880 /ինն հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր ութսուն/**

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*

15.Պայմանագրի ծածկագիրը՝ *ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/49*

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Զ. Մելիքսեթյան /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*